

## **Հայաստանի Հանրապետության տարածքում 2004 թ. առաջին եռամսյակում առաջացած արտակարգ իրավիճակները**

Հայաստանի Հանրապետության տարածքում 2004 թվականի առաջին եռամսյակում առաջացել է 703 արտակարգ իրավիճակ (դեպք), որոնցից՝ 525 (74.7 տոկոս) տեխնածին, 52 (7.4 տոկոս)՝ տարերային եւ 126 (17.9 տոկոս) սոցիալ-կենցաղային բնույթի: Մարտ ամսին ջրհեղեղներից վթարներ են տեղի ունեցել հանրապետության մի շարք ջրամատակարարման համակարգերում (հանգույցներում), որոնք դեպքերի ընդհանուր թվի մեջ չեն հաշվառվել:

Արտակարգ իրավիճակների հետեւանքով տարվա առաջին եռամսյակում զոհվել է 51, տուժել՝ 503 մարդ:

Ինչպես ցույց է տալիս վերլուծությունը՝ զոհերի գերակշիռ մասը՝ մոտ 94 տոկոսը, բաժին է ընկնում տեխնածին արտակարգ իրավիճակներին, մասնավորապես՝ ճանապարհատրանսպորտային պատահարներին (82 տոկոս):

Հանրապետության տարածքում գրանցված արտակարգ իրավիճակների (դեպքերի) գերակշռող մասը (624 դեպք, 88 տոկոսը) կազմում են հրդեհները (մոտ 38 տոկոս), ճանապարհատրանսպորտային պատահարները (մոտ 33 տոկոս) եւ թունավորումները (մոտ 17 տոկոս):

### **Տեխնածին արտակարգ իրավիճակներ**

Գրանցվել է 525 տեխնածին արտակարգ իրավիճակ (դեպք), զոհվել է 48 (ընդհանուր զոհվածների թվի 94.1 տոկոսը), տուժել՝ 319 մարդ (ընդհանուր տուժածների թվի 63.4 տոկոսը):

Տեխնածին արտակարգ իրավիճակների 53.5 տոկոսը բաժին է ընկել մայրաքաղաքին:

2003 թ. նույն ժամանակահատվածի համեմատ 2004 թ. տեխնածին աղետները (դեպքերը) աճել են մոտ 128 տոկոսով (2003 թ.՝ 411 դեպք): Հատկապես աճել է հրդեհների եւ ճանապարհատրանսպորտային պատահարների քանակը: Յոթ դեպքով նվազել են փլուզումները: Չորսով նվազել է զոհվածների, 40-ով՝ աճել տուժածների թիվը:

### **Հրդեհներ**

Գրանցվել է հրդեհների վերաբերյալ 312 ահազանգ, որոնցից 7-ը եղել է կեղծ: 178 (57%) ահազանգ գրանցվել է հանրապետության մայրաքաղաքում: Հրդեհների հետեւանքով զոհվել է 2, տուժել՝ 8 մարդ:

Հրդեհների կտրուկ աճ է գրանցվել գրեթե բոլոր մարզերում, հատկապես՝ Լոռիում եւ Գեղարքունիքում: Քսանյոթ դեպքով աճել են հրդեհները մայրաքաղաքում:

Հրդեհների 34 տոկոսը ծագել է բնակելի շինություններում:

Գրանցվել է հրդեհի ծագման սպառնալիքի, էլհանգույցներում վթարային ռեժիմների, ծխապատ գոտիների առաջացման 30 դեպք, որոնք ընդհանուր ահազանգերի թվում կազմել են 9.1 տոկոս:

Հրդեհների մոտ 18.3 տոկոսը բաժին է ընկել խոտածածկույթներին եւ պահեստավորված անասնակերին, որտեղ բռնկման հիմնական պատճառ են

հանդիսացել բնակիչների անզգույշ վարմունքը կրակի հետ: Առաջին եռամսյակում այրվել է մոտ 101 տոննա անասնակեր (2003 թ. նույն ժամանակահատվածում՝ 92 տ):

Հրդեհներից այրվել է մոտ 151 հազար քառ. մետր մակերես (2003 թ. համեմատ աճել է 109 հազար ք/մ-ով), որից 107 հազարը (71 տոկոս) Սյունիքի եւ Լոռու մարզերում: Գրանցվել է տրանսպորտային միջոցների բռնկման 15 դեպք, որոնցից 11-ը երեւանում: Դրանց հիմնական պատճառն են՝ էլեկտրահամակարգում կարճ միացումները:

### **Փլուզումներ**

2004թ. առաջին եռամսյակում հանրապետությունում գրանցվել է շենքերի, շինությունների, հաղորդակցման ուղիների եւ ինժեներական կառույցների ընդհանուր ու մասնակի փլուզման 12 դեպք, զոհվել է մեկ մարդ:

Փլուզման դեպքերի գերակշռող մասը գրանցվել է մարզերում: Հատկապես հաճախ են փլուզման դեպքերը Շիրակի (3 դեպք), Տավուշի (3 դեպք) մարզերում, որոնք պայմանավորված են Շիրակի մարզում՝ շենքերի վթարայնությամբ ու հնությամբ, Տավուշի մարզում՝ առատ տեղումներով եւ վարարող գետերով:

Փլուզումների առաջացման պատճառ են հանդիսացել՝ շենքերի վթարայնությունն ու հնությունը (5 դեպք), գետերի վարարումներն ու սելավները (7 դեպք), ինքնափլուզումները (5 դեպք):

### **Պայթյուններ**

Գրանցվել է պայթյունի 7 դեպք, զոհվել երեք, տարբեր աստիճանի մարմնական վնասվածքներ ստացել նույնքան մարդ: Երկու դեպքում պայթյունները դարձել են հրդեհի առաջացման պատճառ:

Պայթյունների առաջացման պատճառ են հանդիսացել գազատար խողովակներից անսպասելի արտահոսքը (4 դեպք), վառարանների անսարքության եւ շահագործման կանոնների խախտումը (1 դեպք), եռակցման աշխատանքների անվտանգության կանոնների խախտումը (1 դեպք), գործարանային եւ ինքնաշեն նռնակների կիրառումը (1 դեպք):

### **Տարերային արտակարգ իրավիճակներ**

Հանրապետությունում 2004 թ. առաջին եռամսյակում գրանցվել է 52 տարերային արտակարգ իրավիճակ (դեպք): Դրանցից 2004 թ. առաջին եռամսյակում զոհեր եւ տուժածներ չեն գրանցվել:

### **Գետերի վարարումներ եւ սելավներ**

Մարտի առաջին շաբաթում ջերմաստիճանի կտրուկ աճը, լեռներում՝ տաք քամիները, հորդառատ անձրեւները նպաստեցին արագ ձնհալին, ինչի հետեւանքով հանրապետության մի շարք գետեր վարարեցին, առաջացան սելավային հոսքեր: Դրանք զգալի վնաս հասցրին Արարատի, Արագածոտնի, Գեղարքունիքի, Շիրակի,

Արմավիրի մարզերի մի շարք բնակավայրերի: Ախուրյանի ջրամբարից ջրի առատ բացթողումների հետևանքով վարարեց Արարատի մարզով անցնող Արաքս գետը, որը ջրածածկեց մի շարք ափամերձ գյուղեր:

Հրազդան գետի «Երեւան» դիտակետում գրանցված ջրի ելքի բարձրացումը պայմանավորված էր Կոտայքի մարզում մարտի 1-ից 5-ը օդի ջերմաստիճանի կտրուկ աճով՝ 3.50C մինչեւ 190C: Վարարող գետը մայրաքաղաքում վնաս հասցրեց ափամերձ մի շարք շինությունների եւ գետը հատող ջրամատակարարման ու կոյուղու համակարգերին:

### **Քարաթափումներ**

Գրանցվել է քարաթափման մեկ երեւոյթ. մարտի 16-ին մայրաքաղաքի Մյասնիկյան պողոտայում գրանցվեց միջին չափսի ժայռաքեկորների գահավիժում, ինչի հետևանքով փակվեց երթևեկությունը: Հետագա քարաթափումներից խուսափելու նպատակով՝ մայրաքաղաքի՝ առավել վտանգավոր հատվածներում փրկարարներն կատարել են քարաթափման աշխատանքներ:

### **Ուժեղ քամիներ**

Փետրվարի 2-3-րդ տասնօրյակներում, նաեւ մարտի 5-7-ը, հանրապետությունում գրանցվել է փոթորիկների, մրրիկների, պտտահողմերի 12 դեպք, որոնք հատկապես վնասաբեր եղան Շիրակի, Վայոց ձորի, Սյունիքի, Արագածոտնի, Տավուշի մարզերում: Վնասվեցին թե՛ բնակելի շինությունները, թե՛ էներգամատակարարման եւ հեռահաղորդակցման համակարգեր:

### **Երկրաշարժեր**

Գրանցվել է 43 երկրաշարժ, որոնցից 14-ը՝ հանրապետության տարածքում:

2004 թ. առաջին եռամսյակում՝ 2003 թ. նույն ժամանակահատվածի համեմատ 10 դեպքով ավելացել է գրանցված երկրաշարժերի թիվը: Հիմնականում դիտվել են 2-3 բալ ուժգնությամբ երկրաշարժեր, որոնց էպիկենտրոնները մեծամասնությամբ տեղաբաշխված են եղել հանրապետության հյուսիս-արեւմտյան եւ հյուսիսային սահմանամերձ տարածքներում:

Երկրաշարժերի հետևանքով 2004 թ. առաջին եռամսյակում հանրապետության տարածքում ավերածություններ, զոհեր եւ վիրավորներ չեն գրանցվել:

### **Առատ տեղումներ**

Գրանցվել է հորդառատ անձրեւների 3, ուժեղ ձնաթափի 4 դեպք, որոնք փետրվարին պատճառ դարձան Գեղարքունիքի, Շիրակի մարզերի ավտոճանապարհներին բազմաթիվ տրանսպորտային միջոցների արգելափակման, իսկ մարտին՝ Գեղարքունիքի եւ Արագածոտնի մարզերում սելավային հոսքերի առաջացման:

### **Սոցիալ-կենցաղային արտակարգ իրավիճակներ**

Գրանցվել է 126 սոցիալ-կենցաղային արտակարգ իրավիճակ (դեպք), որոնց հետեւանքով զոհվել է 3, տուժել՝ 184 մարդ:

Համաճարակներ, մարդկանց եւ կենդանիների սուր-վարակիչ հիվանդություններ 2004 թ. առաջին եռամսյակում հանրապետությունում համաճարակների բռնկման դեպքեր չեն գրանցվել: Արձանագրվել է խոզուկի վարակի տարածման դեպք Շիրակի մարզում տեղակայված զորամասում, որտեղից հոսպիտալացվել է 6 զինվոր:

Ջրատարների վթարներից Շիրակի մարզկենտրոնում արձանագրվել է աղիքային վարակների տարածման մեկ դեպք, տուժել եւ մասնագիտական բուժօգնության է դիմել 40 մարդ:

### **Թունավորումներ**

Գրանցվել է թունավորման 118 դեպք, որոնցից 108-ը մայրաքաղաքում, 6-ը՝ Շիրակի, 2-ական՝ Լոռու եւ Արագածոտնի մարզերում: Թունավորումների հետեւանքով զոհվել է 2, տուժել՝ 138 մարդ:

### **Ջրահեղձում**

Հանրապետության ջրային ավազաններում գրանցվել է 1 պատահար. փետրվարի 18-ին Մարտունի գետում ջրահեղձվել է Գեղարքունիքի մարզի Մարտունի քաղաքի մեկ բնակիչ: